ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին>> (փաստաթղթային կոդ՝ Կ-300-10.04.2018-ՏՏԳԲ-011/0), <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> (փաստաթղթային կոդ՝ Կ-300[1]-10.04.2018-ՏՏԳԲ-011/0), <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> (փաստաթղթային կոդ՝ Կ-300[2]-10.04.2018-ՏՏԳԲ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ առաջարկությունների

N	Առաջարկի (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկը (փոփոխությունը, լրացումը) ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	2.	3.	4.	5.	6.
<<Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Վ.Գրիգորյան	Նախագծի 2-րդ հոդված	1. Նախագծի 2-րդ հոդվածով շարադրված «Ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգումը» հոդվածի 2-րդ մասում «ծածկույթը» բառից հետո ավելացնել «ըստ հողատեսքերի» բառերը:	Առաջարկը չի ընդունվել: 1-ին կետով նշված՝ «ըստ հողատեսքերի» բառերի ավելացումը նպատակահարմար չէ, քանի որ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն «Հողատեսքը գյուղատնտեսական և անտառային նշանակության հողերի այն հատկանիշների համալիրն է, որը բնութագրում	

				է դրանց գործառնական օգտագործումը»: Նախագծի՝ «Ցամաքային տարածքի ծածկույթի» դասակարգումը չի ներկայացվում՝ ըստ նշված հողերի գործառնական օգտագործման, այլ հողը որպես մակերես՝ տեսանելի կենսաֆիզիկական ծածկույթ:	
		Նախագծի 2-րդ հոդված	2.Նախագծի 2-րդ հոդվածով շարադրված «Ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգումը» հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «մշակովի հողեր՝» բառերից հետո ավելացնել «հողեր, որոնք օգտագործվում են գյուղատնտեսական կուլտուրաների աճեցման համար,» բառերը:	Առաջարկությունն ընդունվել է, նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում կատարվել է համապատասխան լրացումը:	ընդունվել է
		Նախագծի 2-րդ հոդված	3.Նախագծի 2-րդ հոդված ով շարադրված	Առաջարկությունն ընդունվել է մասնակիորեն, նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ	ընդունվել է

			«Ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգումը» հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում «մարգագետիններ՝» բառից հետո ավելացնել «ցամաքային տարածքի մաս, որը ծածկված է բազմամյա խոտաբույսերով,» բառերը:	կետում կատարվել է լրացում՝ «մարգագետիններ՝» բառից հետո ավելացվել է «ցամաքային տարածքի մաս, որը ծածկված է տարախոտային բուսականությամբ,»:	
		Նախագծի 2-րդ հոդված	4.Նախագծի 2-րդ հոդվածով շարադրված «Ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգումը» հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «3) ծառածածկ տարածքներ՝ցամաքային տարածքի մաս, որը զբաղեցնում է առնվազն ?? հեկտար տարածք, որտեղ աճում են	Առաջարկությունն ընդունվել է մասնակիորեն, նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ <<3) ծառածածկ տարածքներ՝ ցամաքային տարածքի մաս, որը ծածկված է ծառային բուսականությամբ, ընդգրկում են հողային ֆոնդի հատուկ պահպանվող տարածքների հողերը՝ մասնակի և անտառային հողերից՝ անտառները:>>:	ընդունվել է

			առնվազն ?? մետր բարձրությամբ ծառեր և ծառային ծածկույթը կազմում է տարածքի առնվազն ?? տոկոսը: Որպեսզի տարածքը համարվի ծառածածկ, անհրաժեշտ է երկու պայման՝ ծառերի առկայությունը և այլ գերակշռող նպատակով հողերի օգտագործման բացակայությունը: Ընդգրկում են հողային ֆոնդի հատուկ պահպանվող տարածքների հողերը՝ մասնակի և անտառային հողերից՝ անտառները:		
		Նախագծի 2-րդ հոդված	5.Նախագծի 2-րդ հոդվածով շարադրված «Ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգումը» հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում «թփուտապատ տարածքներ՝»	Առաջարկությունն ընդունվել է մասնակիորեն, նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ <<4) թփուտապատ տարածքներ՝ ցամաքային տարածքի մաս, որը ծածկված է թփային բուսականությամբ, ընդգրկում են հողային ֆոնդի հատուկ պահպանվող	ընդունվել է

			բառերից հետո ավելացնել «ցամաքային տարածքի մաս, որի առնվազն ?? տոկոսը զբաղեցված է թփերով և ցածր ծառերով, իսկ ծառածածկ տարածքը կազմում է ընդամենը ?? տոկոս,» բառերը:	տարածքների հողերը՝ մասնակի և անտառային հողերից՝ թփուտները:>>:	
		Նախագծի 2-րդ հոդված	6.Լրամշակել Նախագծի 2-րդ հոդվածով շարադրված «Ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգումը» հոդվածի «ջրածածկ տարածքներ» հասկացությունը, ավելի հստակեցնելով մեկնաբանությունը:	Առաջարկությունն ընդունվել է մասնակիորեն, նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ <<5) ջրածածկ տարածքներ՝ ցամաքային տարածքի մաս, որը զբաղեցված է ջրային օբյեկտներով (գետեր, բնական և արհեստական ջրամբարներ ու լճեր), ընդգրկում են հողային ֆոնդի ջրային հողերը՝ մասնակի և հատուկ պահպանվող տարածքների հողերը՝մասնակի:>>:	ընդունվել է